ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«17» հուլիսի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 28 (քսանութ) անդամներ՝
Ս.Բալասանյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Եդիգարյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Հունանյանը, Գ.Սրգսյանը, Տ.Փանոսյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Ա.Տոնոյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Աղանյանը, Ռ.Սարգսյանը, Ա. Մխիթարյանը, Ս.Մարտիրոսյանը, Հ.Եղիազարյանը, Ա.Վարդանյանը, Լ. Բարսեղյանը, Ա. Գրիգորյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, Ա.Ղարաղազարյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 27
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 17-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 234-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 27
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին¦ N 234-Ն որոշման(այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1–ին կետի 1-ին ենթակետի «4 653 970 500 (չորս միլիարդ վեց հարյուր հիսուներեք միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «4 657 970 500 (չորս միլիարդ վեց հարյուր հիսունյոթ միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «5 221 971 300 (հինգ միլիարդ երկու հարյուր քսանմեկ միլիոն ինը հարյուր յոթանասունմեկ հազար երեք հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «5 225 971 300 (հինգ միլիարդ երկու հարյուր քսանհինգ միլիոն ինը հարյուր յոթանասունմեկ հազար երեք հարյուր)» թվով և բառերով:

2. Բյուջեի հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար NN 1,2,3,4, հավելվածների:

3.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՒԼԻՍԻ ՏԱՍՆԵՐԵՔԻՆ ՏԵՂԱՑԱԾ ՀՈՐԴԱՌԱՏ ԱՆՁՐԵՎԻ ԵՎ ԿԱՐԿՈՒՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾ, ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Գյումրի հանայնքի ղեկավարը այս հարցի վերաբերյալ արեց պարզաբանումներ և պատասխանեց ավագանու անդամների հարցերին:

Հնչեցրած հարցերին պատասխանեց նաև Գյումրի համայնք ղեկավարի տեղակալ Հայկ Սուլթանյանը:

Ավագանու «ԳԱԼԱ» խմբակցության անդամ Լևոն Բարևսեղյանի կողմից առաջարկություն եղավ ցուցակում ընդգրկված հասարակական սեկտորի երեք կազմակերպություններին 100000 ՀՀ դրամի փոխարեն տրամադրել 150000 ՀՀ դրամ:

Առաջարկն ընդունվեց բոլորի կողմից, և հարցը դրվեց քվեարկության՝ արդեն լրամշակված հավելվածով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 28
դեմ – 0
ձեռնպահ – 0
Համայնքի ավագանու անդամ Վարդան Եդիգարյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 3-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Հատկացնել 10 000 000 (տասը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում հուլիսի 13-ին տեղացած հորդառատ անձրևի և կարկուտի հետևանքով տուժած, Գյումրի համայնքում բնակվող անձանց:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին սույն որոշման 1-ին կետով հաստատված գումարի սահմաններում տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի, ինչպես նաև չուսումնասիրված և պատճառված վնասների (ժամանակավոր կացարաններին, գյուղատնտեսական նպատակով օգտագործված հողամասերի բերքին, անշարժ և շարժական գույքին հասցված) վերաբերյալ հետագայում ներկայացվող դիմումների ուսումնասիրությունների արդյունքում հանձնաժողովի կողմից կազմված և Գյումրի համայնքի ավագանու մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից քննարկված և համաձայնեցված ցուցակի:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 46/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹՎՈՎ 6 (ՎԵՑ) ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝Մ.ԴԱՎԹՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 28
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.
Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մովսես Խորենացի փողոց թիվ 46/1 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքի թվով 6 (վեց) սոցիալական բնակարանները անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել 2020 թվականի հուլիսի 13-ին տեղացած հորդառատ անձրևի և կարկուտի հետևանքով տուժած և ժամանակավոր կացարաններում (տնակում) բնակվող անձանց՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ N 214/12 ՀԱՍՑԵԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 28
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել ապամոնտաժել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Շահումյան փողոց N 214/12 հասցեի մանկապարտեզի 2020 թվականի հուլիսի 13-ի կարկուտի և սելավի հետևանքով հետագա շահագործման համար ոչ պիտանի դարձած 898,27 (ութ հարյուր իննսունութ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունը:
2. Առաջարկել Գյումրի համայնքի ղեկավարին՝ որոշման 1-ին կետում նշված շինության ապամոնտաժումից առաջացած, հետագա օգտագործման համար պիտանի շինանյութերը և կոնստրուկցիաները պահեստավորել և շինանյութի տեսքով որպես օգնություն հատկացնել 2020 թվականի հուլիսի 13-ի կարկուտից և սելավից տուժած անապահով ընտանիքներին:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 86-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 28
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 10–ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սևերսկի թաղամաս N 80 հասցեի հողամասը մրցույթով վարձակալության իրավունքով տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային չափ սահմանելու մասին» N 86–Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

որոշման նախաբանում «16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ» բառերը և թվերը փոխարինել «18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ» բառերով և թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

Ավագանու անդամներ Հ.Եղիազարյանը և Ռ.Սարգսյանը քվեարկության չմասնակցեցին օրակարգի 7-րդ հարցից:

ԼՍԵՑԻՆ.

7. «ԱՐՄՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ՍՔԱՅ ԳՅՈՒՄՐԻ (SKY GYUMRI)» ԾՐԱԳՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 1 (Ա.Առաքելյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Սևերսկի թաղամաս N 80 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N07052020-08-0007) բնակավայրերի նպատակային նշանակության հողերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 0,6 (զրո ամբողջ վեց տասնորդական) հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ հողամաս) (կադաստրային ծածկագիր 08-001-0261-0092) մրցույթով տրամադրել վարձակալության իրավունքով օգտագործման՝ բարեկարգման և կանաչապատման նպատակով:
2. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 70 000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 5 (հինգ) տարի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԱՎԱՐ ՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 26

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետությանը և Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով՝ հետևյալ անհատական կազմով.
   1) Ռուբեն Սանոյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
   2) Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,
   3) Արթուր Հակոբյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ,

4) Աննա Մանուկյան – աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,
5) Լենա Ջիլավյան – աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,
6) Արամայիս Գրիգորյան – Գյումրի համայնքի ավագանու անդամ,
7) Սիրվարդ Բասենցյան –աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Նշանակել՝
1) աճուրդավար՝ Ռուբեն Սանոյանին,
2) արձանագրող՝ Սիրվարդ Բասենցյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մրցութային հանձնաժողովի անդամներին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ս. Բալասանյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Ա. Տոնոյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ռ. Սարգսյան _____

Ա. Մխիթարյան _____

Ս.Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա.Վարդանյան _____

Ա. Գրիգորյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա. Ղարաղազարյան _____

Հ.Պողոսյան _____

Ա. Առաքելյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

քաղաք Գյումրի
«17» հուլիսի 2020 թվական